ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 3821-Ա

"ԳԱՐԱՆՏ 24" ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀ ՏՄՆՀՀ-ԷԱՃԱՊՁԲ24/39 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտը աճուրդի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկը չի համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես.

- գնման ընթացակարգի դիմում-հայտարարության 1)-ին ենթակետը չի համապատասխանել հրավերի պահանջներին (բացակայել է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը),
- գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը գրված է հայերեն,
- գնման ընթացակարգի դիմում-հայտարարությունը ստորագրված չէ
- բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.3),
- 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը լրացված չեն, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և ծանուցել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: 25.11.2024թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ոչ մի փաստաթուղթ չի շտկվել և չի ներկայացվել: Ըստ այդմ, նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը, ինչպես նաև 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչի վերաբերյալ պատվիրատուն գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է հայտարարություն: Գնահատող հանձնաժողովը որոշել է նաև «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթակարգ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, ***կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը***, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը*** և մասնակիցը հրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանգրի և /կամ/ որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Պատվիրատուն արձանագրում է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն իր կողմից գնման ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով իր հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասանությունները սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը***, որը հանգեցրել է գնման գործընթացին ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, որտեղ առկա են «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

2024 թ. նոյեմբերի 27
ք.Նոյեմբերյան